ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

N 02/9/5944-16 "25" 11 2016 թ.

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի
նախագահ՝ Լ. Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 2016 թվականի նոյեմբերի 20-ի գրության, ներկայացնում ենք հարցման պատասխաններն ըստ կետերի.

1. Առաջնորդվելով «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 1510-Ն «Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմիններում աշխատանքային ծրագրերի կազմման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ աշխատանքային ծրագրերի մուտքագրման, հաստատման, այդ համակարգով կատարողականների գնահատման և կատարողականների հիման վրա պարգևատրման կարգը հաստատելու մասին» որոշմամբ հաստատված կարգի 5-րդ (V) գլխով՝ ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողները կիսամյակային հաշվետվության հիման վրա, դրամական պարգևատրումը պետական ծառայողների պարգևատրման ֆոնդից 2015 թվականի երկրորդ կիսամյակի համար ստացել են 2016 թվականի փետրվարի 10-ին (95

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2,
Республика Армения, Ереван 0010, ул. Вазгена Саргсяна 3, Дом правительства 2,
Government House 2, Vazgen Sargsyan str. 3, Yerevan 0010, Republic of Armenia
Հեռ./Тел./Tel.: (010, 011) 52 93 49, ֆաքս/факс/fax (374 11) 52 39 22,
Էլ-փոստ/Эл.почта/E-mail: info@mincult.am, www.mincult.am

քաղաքացիական ծառայող՝ 18251.7 հազար դրամ), իսկ 2016 թվականի առաջին կիսամյակի համար՝ 2016 թ. հուլիսի 25-ին (98 քաղաքացիական ծառայող՝ 18251.7 հազար դրամ):

Ինչպես նաև առաջնորդվելով «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ կետերով երկու քաղաքացիական ծառայող խրախուսվել են դրամական պարգևատրմամբ՝ 402000 և 345458 դրամ:

2. Դրամական պարգևատրումների ընդհանուր գումարը կազմել է 37251.65 հազար դրամ:

3. 98 քաղաքացիական ծառայող ստացել է դրամական պարգևատրում:

Հարգանքով՝ Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հասարակայնության հետ կապերի բաժին՝
Կատ.՝ Ա. Սերոբյան
Հեռ.՝ 011-56-45-46